# ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

**ՎԶՄԲ վարկ 8483-AM**

ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ
## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

# ՀԱՏՈՒԿ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

# ԵՎ

# ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

2022թ. հունվարի 1-ից մինչև 2023թ. ապրիլի 30-ը ընկած ժամանակահատվածի համար

**ԵՐԵՎԱՆ**
**Հունիս 2023**

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Էջ

ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀԱՄԱՐ........3

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ........4

ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄՈՒՏՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ........7

ԸՍՏ ԾՐԱԳՐԻ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ՖՈՆԴԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ........8

ՀԱՏՈՒԿ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ........9

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ԾՐԱԳՐԻ ԿՈՂՄԻՑ ՎՃԱՐՎԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԵՎ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԴՐՈՒՄ........18

## ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀԱՄԱՐ

Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամի (ՀՏԶՀ) ղեկավարությունը պատասխանատու է 08.04.2015թ. կնքված ՎԶՄԲ Վարկ 8483-AM Վարկային Համաձայնագրով ֆինանսավորվող (Վարկային Համաձայնագիր) և Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամի (ՀՏԶՀ) կողմից իրականացվող "Սոցիալական Ներդրումների և Տեղական Զարգացման Ծրագրի" (Ծրագիր) 2022թ. հունվարի 1-ից մինչև 2023թ. ապրիլի 30-ը ընկած ժամանակահատվածի հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար՝ համաձայն Հանրային Հատվածի Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ՀՀՀՀՄՍԽ) կողմից հրապարակված «Ֆինանսական հաշվետվություններ հաշվապահական հաշվառման դրամային միջոցների սկզբունքով» ՀՀՀՀՄ ստանդարտի (ՀՀՀՀՄ-դրամարկղային սկզբունք) և Համաշխարհային Բանկի կողմից ֆինանսավորվող ներդրումային գործառնությունների Ֆինանսական Ձեռնարկի (ՀԲ ուղեցույց):

Հատուկ նպատակներով ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս, ՀՏԶՀ-ի ղեկավարությունը պատասխանատու է.

- Հաշվապահական հաշվառման քաղաքականության պատշաճ ընտրության և կիրառման համար,
- Ներկայացնել տեղեկատվությունը, ներառյալ հաշվապահական հաշվառման քաղաքականությունը, այնպես որ այն լինի արժանահավատ, համադրելի ու հասկանալի,
- Ներկայացնել լրացուցիչ անհրաժեշտ տեղեկատվություն 2022թ. հունվարի 1-ից մինչև 2023թ. ապրիլի 30-ը ընկած ժամանակահատվածի վերաբերյալ:

ՀՏԶՀ-ի ղեկավարությունը նաև պատասխանատու է.

- Մշակելու, ներդնելու ու պահպանելու ներքին հսկողության արդյունավետ համակարգ,
- Կատարելու հաշվապահական հաշվառման պատշաճ գրանցումներ, որոնք բավարար են ներկայացնելու ու պարզաբանելու գործարքները, և որոնք հնարավորություն են տալիս հիմնավորել, որ հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են համաձայն ՀՀՀՀՄ-դրամարկղային սկզբունքի և ՀԲ ուղեցույցի,
- Ձեռնարկել հնարավոր միջոցներ Ծրագրի ակտիվների պահպանման նպատակով, և ապահովել, որ ֆոնդերն օգտագործվել են Վարկային Համաձայնագրում նշված պայմաններին և ՀԲ համապատասխան ուղեցույցներին համապատասխան՝ պատշաճ ուշադրություն դարձնելով տնտեսմանը և արդյունավետությանը, և միայն այն նպատակներով, որոնց համար հատկացվել են,
- Վարել Նպատակային հաշիվները համաձայն Վարկային Համաձայնագրի պայմանների և Համաշխարհային Բանկի համապատասխան ուղեցույցների,
- Ֆինանսավորվող աշխատանքները, ապրանքները և ծառայությունները ձեռք բերել համաձայն Վարկային համաձայնագրի պայմանների և Համաշխարհային Բանկի համապատասխան ուղեցույցների, և
- Կանխարգելել և բացահայտել խարդախությունը կամ այլ սխալները:

2022թ. հունվարի 1-ից մինչև 2023թ. ապրիլի 30-ը ընկած ժամանակահատվածի հատուկ նպատակների ծրագրի ֆինանսական հաշվետվությունները ստորագրվել են ՀՏԶՀ ղեկավարության կողմից 2023թ. հունիսի 28-ին:

Սարգիս Բաղինյան
Գործադիր տնօրեն

Լեոն Դուլյան
Գլխավոր ֆինանսիստ

BDO

Հեռ. +37460 528899
Էլ.փոստ bdo@bdoarmenia.am
www.bdoarmenia.am

ՀՀ, ք. Երևան
Դ. Անհաղթի 23/6, 5-րդ
հարկ, տարածք 7

# ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ներկայացվում է Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամի ղեկավարությանը:

***Կարծիք***

Մենք աուդիտի ենք ենթարկել 08.04.2015թ. կնքված ՎԶՄԲ Վարկ 8483-AM Վարկային Համաձայնագրով ֆինանսավորվող (Վարկային Համաձայնագիր) և Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամի (ՀՏԶՀ) կողմից իրականացվող "Սոցիալական Ներդրումների և Տեղական Զարգացման Ծրագրի" (Ծրագիր) հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2022թ. հունվարի 1-ից մինչև 2023թ. ապրիլի 30-ը ընկած ժամանակահատվածի դրամական միջոցների մուտքերի և վճարումների մասին հաշվետվությունը, ըստ բաղադրիչների ֆոնդերի օգտագործման մասին հաշվետվությունը, ինչպես նաև հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվություններին կից հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփը և այլ ծանոթագրությունները:

Մեր կարծիքով, 2022թ. հունվարի 1-ից մինչև 2023թ. ապրիլի 30-ը ընկած ժամանակահատվածի կից հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով պատրաստվել են՝ համաձայն *"Ֆինանսական հաշվետվություններ հաշվապահական հաշվառման դրամային միջոցների սկզբունքով"* Հանրային Հատվածի Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտի (ՀՀՀՀՄՍ-դրամարկղային սկզբունք) և Համաշխարհային Բանկի կողմից ֆինանսավորվող ներդրումային գործառնությունների Ֆինանսական Ձեռնարկի (ՀԲ ուղեցույց):

***Կարծիքի հիմք***

Մենք աուդիտն իրականացրել ենք Աուդիտի և Երաշխավորման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ԱԵՄՍԽ) կողմից հրապարակված Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներին) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է սույն հաշվետվության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում:
Մենք անկախ ենք Ծրագրից և ՀՏԶՀ-ից՝ համաձայն Հաշվապահների Էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՍԽ կանոնագիրք), և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀՄԷՍԽ կանոնների:
Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

***Հանգամանքի շեշտադրում - Դրամարկղային սկզբունք***

Առանց ձևափոխելու մեր կարծիքը, Ձեր ուշադրությունն ենք հրավիրում ֆինանսական հաշվետվություններին կից ծնթ. 2-ին, որտեղ ներկայացված է, որ այս ֆինանսական հաշվետվությունները պատրաստված են դրամարկղային սկզբունքով, որի պատճառով, այս հաշվետվությունները կարող են չհամապատասխանել այլ նպատակներով օգտագործման համար:

***Հանգամանքի շեշտադրում - Ծրագրի ավարտ***

Առանց ձևափոխելու մեր կարծիքը, Ձեր ուշադրությունն ենք հրավիրում ֆինանսական հաշվետվություններին կից ծնթ. 11-ին, որտեղ ներկայացված է, որ Ծրագիրն ավարտվել է հաշվետու ժամանակաշրջանի ավարտի դրությամբ:

***Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար***
ՀՏԶՀ-ի ղեկավարությունը պատասխանատու է Հանրային Հատվածի Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ՀՀՀՀՄՍԽ) կողմից հրապարակված ՀՀՀՀՄՍ-դրամարկղային սկզբունքի և ՀԲ ուղեցույցի համաձայն հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար և այնպիսի ներքին հսկողության համար, որը, ղեկավարության կարծիքով, անհրաժեշտ է՝ խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Հեռ. +37460 528899
Էլ.փոստ՝ bdo@bdoarmenia.am
www.bdoarmenia.am

ՀՀ, ք. Երևան
Դ. Անհաղթի 23/6, 5-րդ հարկ, տարածք 7

*Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար*

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացած լինելու հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, սակայն այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացրած աուդիտը միշտ կհայտնաբերի բոլոր էական խեղաթյուրումները, երբ նրանք առկա են: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք՝ առանձին կամ միասին վերցրած, կազդեն հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:
ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություններ և պահպանում մասնագիտական կասկածամտություն:

Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտմաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում,
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ՝ Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար,
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարված հաշվապահական գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը,
- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների և դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Մենք, ի թիվս այլ հարցերի, ղեկավարությանը տեղեկացնում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

**Եզրակացություն իրավական այլ պահանջներին համապատասխանելու վերաբերյալ**

Վարկային Համաձայնագրերի պահանջների պահպանման նպատակով, ՀՏԶՀ-ի ղեկավարությունը պետք է ապահովի, որ.

1. Ֆոնդերն օգտագործվել են Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկի (ՎԶՄԲ) միջև կնքված Վարկային Համաձայնագրում նշված պայմաններին և Համաշխարհային Բանկի համապատասխան ուղեցույցներին համապատասխան՝ պատշաճ ուշադրություն դարձնելով տնտեսմանը և արդյունավետությանը, և միայն այն նպատակներով, որոնց համար հատկացվել են:
2. Փոխհատուցման դիմումներում ներկայացված ծախսերը ապահովված են համապատասխան հիմնավորող փաստաթղթերով, գրանցումներով և հաշիվներով: Փոխհատուցման դիմումներում ներառված և փոխհատուցված ծախսերը ընդունելի են ֆինանսավորման համար՝ համաձայն Վարկային Համաձայնագրի: ՀՏԶՀ-ի կողմից հաշվետու տարվա վերաբերյալ ներկայացված Միջանկյալ Ֆինանսական Հաշվետվությունները համապատասխանում են հաշվապահական գրանցումներին:

BDO

Հեռ. +37460 528899
Էլ.փոստ՝ bdo@bdoarmenia.am
www.bdoarmenia.am

ՀՀ, ք. Երևան
Դ. Անհաղթի 23/6, 5-րդ
հարկ, տարածք 7

3. Նպատակային հաշիվները վարվել են համաձայն Վարկային Համաձայնագրի պայմանների և Համաշխարհային Բանկի համապատասխան ուղեցույցների:
4. Ֆինանսավորվող աշխատանքները, ապրանքները և ծառայությունները ձեռք են բերվել համաձայն Վարկային համաձայնագրի պայմանների և Համաշխարհային Բանկի համապատասխան ուղեցույցների:

Մեր կարծիքով, 2022թ. հունվարի 1-ից մինչև 2023թ. ապրիլի 30-ը ընկած ժամանակահատվածի ընթացքում ՀՏԶՀ-ի ղեկավարությունը պահպանել է նշված պահանջները:

"Բի-Դի-Օ Արմենիա" ՓԲԸ
28 հունիսի, 2023թ.

Վահագն Սահակյան, FCCA
Տնօրեն

## ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄՈՒՏՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

*Սոցիալական Ներդրումների և Տեղական Զարգացման ծրագիր*
*ՎԶՄԲ վարկ 8483-AM*
*2022թ. հունվարի 1-ից մինչև 2023թ. ապրիլի 30-ը ընկած ժամանակահատվածի վերաբերյալ*
*ԱՄՆ դոլար*

| Հոդվածներ | Ծնթ. | Փաստացի | | | Նախատեսված | Շեղում |
|---|---|---|---|---|---|---|
| | | 31.12.2021 ավարտված տարի | 01.01.2022թ.-ից 30.04.2023թ. | Աճողական առ 30.04.2023 | Աճողական առ 30.04.2023 | Աճողական առ 30.04.2023 |
| **Դրամական միջոցների սկզբնական մնացորդ** | 6 | **1,628,203** | **1,941,908** | | | |
| **Ֆոնդերի աղբյուրներ** | 9 | | | | | |
| ՎԶՄԲ վարկ 8483-AM | | 2,248,634 | 2,345,895 | 30,000,000 | | |
| ՀՀ Կառավարության համաֆինանսավորում | | 959,622 | 1,035,207 | 11,034,404 | | |
| Համայնքների ներդրումներ | | 198,964 | 95,106 | 2,453,757 | | |
| Հովանավորների ներդրումներ | | - | - | 73,284 | | |
| **Ընդամենը** | | **3,407,220** | **3,476,208** | **43,561,445** | | |
| | | | | | | |
| **Ֆոնդերի օգտագործում** | | | | | | |
| 1. Աշխատանքներ, ապրանքներ և խորհրդատուների ծառայություններ՝ Ծրագրի Մաս Ա.-ի գծով | | 872,825 | 508,590 | 24,713,485 | 25,012,922 | 299,437 |
| 2. Աշխատանքներ, ապրանքներ և խորհրդատուների ծառայություններ՝ Ծրագրի Մաս Բ.-ի գծով | | 1,562,711 | 4,170,978 | 13,437,230 | 13,630,595 | 193,366 |
| 3. Ապրանքներ, խորհրդատուների ծառայություններ (ներառյալ՝ Ծրագրի աուդիտը) և դասընթացներ՝ Ծրագրի Մաս Գ.-ի գծով | | 39,896 | 35,204 | 307,894 | 304,107 | (3,787) |
| 4. Գործառնական ծախսեր՝ Ծրագրի Մաս Գ.-ի գծով | | 674,997 | 102,508 | 4,440,891 | 4,441,558 | 667 |
| 5. Նախնական վճար | | - | - | 75,000 | 75,000 | - |
| **Ընդամենը** | **10** | **3,150,429** | **4,817,280** | **42,974,500** | **43,464,182** | **489,683** |
| **Այլ մուտք/(ելք), զուտ** | | **-** | **(54,947)*** | **(54,947)** | | |
| **Արտարժույթի տարբերությունից օգուտ/(կորուստ)** | | **56,914** | **130,439** | **144,330** | | |
| **Դրամական միջոցների վերջնական մնացորդ** | **6** | **1,941,908** | **676,328** | **676,328** | | |

**ՍՆՏԶ ծրագրի վերջնաժամկետի՝ 2023թ. ապրիլի 30-ի դրությամբ ընթացքի մեջ գտնվող ծրագրերը, Համաշխարհային բանկի թույլտվությամբ, փոխանցվել են ՍՆՏԶ ԼՖ ծրագրին: Ըստ այդմ, համայնքների համաֆինանսավորման գումարների հաշվեկշիռը նույնպես փոխանցվել է ՍՆՏԶ ԼՖ ծրագրին:*

Հատուկ նպատակների ծրագրի ֆինանսական հաշվետվությունները ստորագրվել են Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամի ղեկավարության կողմից 2023թ. հունիսի 28-ին: Կից ծանոթագրությունները ծրագրի հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասն են:

**Սարգիս Բաղինյան**
Գործադիր տնօրեն

**Լևոն Դուլյան**
Գլխավոր ֆինանսիստ

## ԸՍՏ ԾՐԱԳՐԻ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ՖՈՆԴԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

*Սոցիալական Ներդրումների և Տեղական Զարգացման ծրագիր*
*ՎԶՄԲ վարկ 8483-AM*
*2022թ. հունվարի 1-ից մինչև 2023թ. ապրիլի 30-ը ընկած ժամանակահատվածի վերաբերյալ*
*ԱՄՆ դոլար*

| Ծրագրի բաղադրիչներ | Փաստացի | | | Նախատեսված | Շեղում |
|---|---|---|---|---|---|
| | 31.12.2021 ավարտված տարի | 01.01.2022թ.-ից 30.04.2023թ. | Աճողական առ 30.04.2023 | Աճողական առ 30.04.2023 | Աճողական առ 30.04.2023 |
| **Մաս Ա. Օժանդակություն Տեղական Սոցիալ-Տնտեսական Զարգացմանը և Կարողությունների Ստեղծմանը** | **872,825** | **508,590** | **24,713,485** | **25,012,922** | **299,437** |
| Ա.1. Աշխատանքներ | 821,993 | 431,780 | 22,212,615 | 22,491,339 | 278,724 |
| Ա.2. Միկրո-ծրագրերի համար ապրանքներ | - | 44,749 | 825,206 | 841,570 | 16,364 |
| Ա.3. Միկրո-ծրագրերի համար խորհրդատուների ծառայություններ և դասընթացներ | 50,832 | 32,061 | 1,675,664 | 1,680,013 | 4,349 |
| **Մաս Բ. Օժանդակություն Միջհամայնքային Սոցիալական և Տնտեսական Զարգացումներին Միտված Նախաձեռնություններին** | **1,562,711** | **4,170,978** | **13,437,230** | **13,630,595** | **193,366** |
| Բ.1. Աշխատանքներ | 284,370 | 461,666 | 746,037 | 729,593 | (16,444) |
| Բ.2. Ենթածրագրերի համար ապրանքներ | 1,225,029 | 3,676,636 | 12,605,205 | 12,805,870 | 200,666 |
| Բ.3. Ենթածրագրերի համար խորհրդատուների ծառայություններ և դասընթացներ | 53,312 | 32,676 | 85,988 | 95,132 | 9,144 |
| **Մաս Գ. Ինստիտուցիոնալ Հզորացում և Ծրագրի ղեկավարում** | **714,893** | **137,712** | **4,748,785** | **4,745,665** | **(3,120)** |
| Գ.1. Ծրագրի Մոնիտորինգ և Գնահատում, և Աշխատակազմի Կարողությունների Զարգացում | 37,863 | 11,988 | 142,616 | 141,101 | (1,515) |
| Գ.2. ՀՍՆՀ-ից ՀՏԶՀ-ի անցման օժանդակում | - | - | - | - | - |
| Գ.3.. ՀՏԶՀ-ի համար ապրանքներ | 2,033 | 23,216 | 165,278 | 163,006 | (2,272) |
| Գ.4 Գործառնական ծախսեր | 674,997 | 102,508 | 4,440,891 | 4,441,558 | 667 |
| **Նախնական վճար** | - | - | 75,000 | **75,000** | - |
| **Ընդամենը** | **3,150,429** | **4,817,280** | **42,974,500** | **43,464,182** | **489,683** |

*Հատուկ նպատակների ծրագրի ֆինանսական հաշվետվությունները ստորագրվել են Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամի ղեկավարության կողմից 2023թ. հունիսի 28-ին: Կից ծանոթագրությունները ծրագրի հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասն են:*

**Սարգիս Բադիրյան**
Գործադիր տնօրեն

**Լևոն Դուլյան**
Գլխավոր ֆինանսիստ

ՀԱՏՈՒԿ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

*Սոցիալական Ներդրումների և Տեղական Զարգացման ծրագիր*
*ՎԶՄԲ վարկ 8483-AM*
*2022թ. հունվարի 1-ից մինչև 2023թ. ապրիլի 30-ը ընկած ժամանակահատվածի վերաբերյալ*

## 1. Ընդհանուր տեղեկություններ

### *1.1. Ծրագրի ֆինանսավորումը*

Համաձայն 2015թ. ապրիլի 8-ին Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկի (ՎԶՄԲ) միջև կնքված 8483-AM վարկային համաձայնագրի՝ ՎԶՄԲ-ն Հայաստանի Հանրապետությանն է տրամադրել 30,000,000 USD (ԱՄՆ դոլար) գումար:
Վարկը տրամադրվել է իրականացնելու «Սոցիալական Ներդրումների և Տեղական Զարգացման ծրագիրը» (Ծրագիր):
Վարկային համաձայնագիրը ուժի մեջ է մտել 22.09.2015թ.-ին:

ՎԶՄԲ 8483-AM վարկի համար ծախսերի կատարման վերջնաժամկետ է սահմանված 2022թ.-ի դեկտեմբերիի 31-ը (թարմացված):
Մինչև փակման ամսաթիվը կատարված ծախսերը ներկայացնելու արտոնյալ ժամկետ է սահմանված փակման ամսաթվից հետո չորս ամիս՝ 30.04.2023թ.-ը:

### *1.2. Ծրագրի նպատակը*

Ծրագրի նպատակն է համայնքային և միջհամայնքային ենթակառուցվածքների որակի և հասանելիության բարելավումը:

Ծրագիրը բաղկացած է հետևյալ մասերից.

Մաս Ա. Օժանդակություն Տեղական Սոցիալ-Տնտեսական Զարգացմանը և Կարողությունների Ստեղծմանը.

1. Համայնքային Միկրո-ծրագրերի իրականացում՝ Ծրագրի Իրականացման Կոմիտեի (ԾԻԿ) օժանդակությամբ, ներառյալ՝ ա/ հիմնական համայնքային ենթակառուցվածքների (կրթական, առողջապահական և սոցիալական ծառայությունների) կառուցում, վերանորոգում կամ ընդլայնում; բ/ ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի տեղադրում կամ հիմնանորոգում; գ/ գյուղերում ոռոգման և էլեկտրաֆիկացման փոքր աշխատանքների իրականացում և դ/ պետական ենթակառուցվածքների համար էներգախնայողության լուծումների տեղադրում:
2. Տրամադրել. ա/ տեխնիկական օժանդակություն՝ ապահովելու համար Միկրո-ծրագրերի պատշաճ նախագծումը և վերահսկողությունը; և բ/ համայնքներում ինստիտուցիոնալ և ֆինանսական կարողությունների ստեղծում:
3. Գույքի և սարքավորումների տրամադրում՝ Միկրո-ծրագրերի շահառու ենթակառուցվածքներին, ինչպիսիք են վերականգնված դպրոցները, մանկապարտեզները և համայնքային կենտրոնները. ինչպես նաև այլ սոցիալական ենթակառուցվածքների համար՝ Գործառնական ձեռնարկում սահմանված չափանիշներին համապատասխան:

Մաս Բ. Օժանդակել Միջհամայնքային Սոցիալական և Տնտեսական Զարգացումներին Միտված Նախաձեռնություններին.

1. Հայաստանի տարածքային բարեփոխումներին օժանդակություն՝ նորարարական նախաձեռնությունների իրականացմամբ (ենթածրագրեր):
2. Տրամադրել. ա/ տեխնիկական օժանդակություն՝ ապահովելու համար ենթա-ծրագրերի պատշաճ նախագծումը և վերահսկողությունը; և բ/ համայնքներում ինստիտուցիոնալ և ֆինանսական կարողությունների ստեղծում:
3. Գույքի և սարքավորումների տրամադրում՝ ենթածրագրերի շահառու ենթակառուցվածքներին:

Մաս Գ. Ինստիտուցիոնալ Հզորացում և Ծրագրի Ղեկավարում

Ինստիտուցիոնալ օժանդակության ապահովում, կարողությունների ստեղծում և տեխնիկական աջակցություն ՀՆՍՀ/ՀՏԶՀ-ին՝ Ծրագրի կառավարման, ֆիդուցիար վերահսկողության, երաշխիքների վերահսկողության, վերապատրաստման անցկացման և այս ամենի համար պահանջվող Գործառնական ծախսերի ապահովման համար:

### 1.3. Բյուջե

Ծրագիրը ֆինանսավորվում է.

- ՎԶՄԲ 8483-AM վարկով,
- ՀՀ Կառավարության համաֆինանսավորմամբ,
- Համայնքների ներդրումով
- Հովանավորների ներդրումներով և այլ եկամուտներով:

| Ծախսային հոդված | ՎԶՄԲ 8483-AM վարկ* | ՀՀ Կառավա-րություն | Համայնքների ներդրում | Հովանա-վորների ներդրու մ-ներ և այլն | Ընդամենը | Վարկով ֆինանսավորվող մասնաբաժին (ներառյալ հարկերը) |
|---|---|---|---|---|---|---|
| | ԱՄՆ դոլար | ԱՄՆ դոլարին համարժեք | ԱՄՆ դոլարին համարժեք | ԱՄՆ դոլարին համարժեք | ԱՄՆ դոլար | |
| 1. Աշխատանքներ, ապրանքներ և խորհրդատուների ծառայություններ՝ Ծրագրի Մաս Ա.-ի գծով | 17,958,000 | 5,640,200 | 1,290,000 | 74,000 | 24,962,200 | 72.15% |
| 2. Աշխատանքներ, ապրանքներ և խորհրդատուների ծառայություններ՝ Ծրագրի Մաս Բ.-ի գծով | 10,100,000 | 2,741,000 | 625,000 | - | 13,466,000 | 75.00% |
| 3. Ապրանքներ, խորհրդատուների ծառայություններ (ներառյալ՝ Ծրագրի աուդիտը) և դասընթացներ՝ Ծրագրի Մաս Գ.-ի գծով | 215,000 | 81,800 | - | - | 296,800 | 72.45% |
| 4. Գործառնական ծախսեր՝ Ծրագրի Մաս Գ.-ի գծով | 1,652,000 | 2,548,000 | - | - | 4,200,000 | 50% (Y2015), 45% (Y2016), 40% (Y2017), 35% (Y2018), 30% after. |
| 5. Նախնական վճար | 75,000 | - | - | - | 75,000 | 100% |
| **Ընդամենը** | **30,000,000** | **11,011,000** | **1,915,000** | **74,000** | **43,000,000** | |

(*) Բյուջեն թարմացվել է Վարկային Պայմանագրի 2020թ.-ի մարտի 26-ի լրացումով:

### 1.4. Ծրագրի իրականացում

Ծրագիրը իրականացվում է Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամի (ՀՏԶՀ) կողմից (նախկինում անվանվում էր Հայաստանի Սոցիալական Ներդրումների Հիմնադրամ (ՀՍՆՀ)): ՀՍՆՀ-ը հիմնադրվել է միակ հիմնադիր Հայաստանի Հանրապետության Կառավարության 11.04.2000թ. N 162 որոշումով՝ որպես անկախ, շահույթ չհետապնդող կազմակերպություն՝ համայնքի նախաձեռնության և պահանջարկի հիման վրա գործունեության միջոցով փոքրածավալ ենթակառուցվածքների վերականգնմանը աջակցման համար:

ՀՏԶՀ-ն իրականացնում է ՀԲ-ի և այլ դոնորների կողմից ֆինանսավորվող ծրագրեր՝ նպաստելով.

- բնակչության կենսամակարդակի բարձրացմանը՝ սոցիալական և տնտեսական ենթակառուցվածքների և հանրային ծառայությունների, աշխատանքի, ներդրումային գործունեության որակի և հասանելիության բարելավման միջոցով,
- ՀՀ-ի տարածաշրջանների ինստիտուցիոնալ և ֆինանսական հզորացմանը:

Հոգաբարձուների Խորհուրդը ՀՏԶՀ-ի բարձրագույն կառավարման մարմինն է:

ՀՏԶՀ-ի գրանցման հասցեն է՝ ՀՀ, Երևան, 0037, Կ. Ուլնեցու 31:

## 2. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ

### *2.1 Ֆինանսական հաշվետվությունների պատրաստում և ներկայացում*

Ծրագրի հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Հանրային Հատվածի Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ՀՀՀՀՄՍԽ) կողմից հրապարակված «Ֆինանսական հաշվետվություններ հաշվապահական հաշվառման դրամային միջոցների սկզբունքով» Հանրային Հատվածի Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների և ներկայացվել են Համաշխարհային Բանկի կողմից ֆինանսավորվող ներդրումային գործառնությունների Ֆինանսական Ձեռնարկի՝ «RM 3 - Ֆինանսական Հաշվետվողականություն և Աուդիտ»-ի (մարտ 2010) համաձայն:
Այս հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս կիրառվել է ստորև ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը: Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը կիրառվել է հետևողականորեն:

### *2.2 Հաշվապահական հաշվառման դրամային միջոցների սկզբունք*

Այս հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել և ներկայացվել են, կիրառելով հաշվապահական հաշվառման դրամային միջոցների սկզբունքը:
Հաշվապահական հաշվառման դրամային միջոցների սկզբունքի կիրառման դեպքում գործարքները և այլ դեպքերը ճանաչվում են միայն այն դեպքում, երբ դրամական միջոցը կամ համարժեքը ստացվել է կամ վճարվել:
Դրամային միջոցների սկզբունքով պատրաստված ֆինանսական հաշվետվությունները տրամադրում են տեղեկատվություն ժամանակաշրջանում ստացված դրամական միջոցների, դրամական միջոցների օգտագործման ուղղությունների և հաշվետու ամսաթվի դրությամբ դրամական միջոցների մնացորդների վերաբերյալ:

### *2.3 Ներկայացման արժույթը*

Այս հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը ԱՄՆ դոլարն է (USD):

### *2.4 Գործարքներ արտարժույթով*

Արտարժույթը Ծրագրի ներկայացման արժույթից տարբերվող արժույթն է:

Ծրագրի բանկային հաշիվները վարվում են ԱՄՆ դոլարով և ՀՀ դրամով:
Արտարժույթով իրականացված գործարքները փոխարկվում են ֆունկցիոնալ արժույթի՝ գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով Որպես փոխարժեք ընդունվում է.

- Մուտքերի համար՝ ՀՀ Կենտրոնական բանկի կողմից սահմանված Գործարքի օրվա դրությամբ արտարժույթի առքի փոխարժեքը:
- Ելքագրվող գումարների համար՝ ՀՀ Կենտրոնական բանկի կողմից սահմանված գործաքրքի օրվա դրությամբ արտարժույթի վաճառքի փոխարժեքը:

### *2.5 Ծրագրի բյուջե*

Ֆինանսավորման և ծախսումների տարեկան բյուջեները հիմնված են ծրագրի համաձայնագրի հաստատված բյուջեի վրա (ծնթ. 1.3):
Ծախսումների բյուջեն ստեղծվել է վերջին ժամանակահատվածի փաստացի կուտակված ծախսերի հիման վրա՝ գումարած տվյալ ժամանակահատվածի փոփոխված գնումների պլանը:

### *2.6 Հարկեր*

Ծրագրի շրջանակներում հարկերը վճարվում են Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրության ընդհանուր կարգով:

3. Վարկային միջոցների առհանումների հաշվետվություն (Summary report և SOE)

*ՎԶՄԲ վարկ 8483-AM*
*2022թ. հունվարի 1-ից մինչև 2023թ. ապրիլի 30-ը ընկած ժամանակահատվածի վերաբերյալ*
*ԱՄՆ դոլար*

| Դիմումի համար | Ամսաթիվը | *Ծախսային հոդվածներ* | | | | *Ընդամենը* |
|---|---|---|---|---|---|---|
| | | 1. Աշխատանքներ, ապրանքներ և խորհրդատուների ծառայություններ՝ Ծրագրի Մաս Ա.-ի գծով | 2. Աշխատանքներ, ապրանքներ և խորհրդատուների ծառայություններ՝ Ծրագրի Մաս Բ.-ի գծով | 3. Ապրանքներ, խորհրդատուների ծառայություններ (ներառյալ՝ Ծրագրի աուդիտը) և դասընթացներ ՝ Ծրագրի Մաս Գ.-ի գծով | 4.Գործառնական ծախսեր՝ Ծրագրի Մաս Գ.-ի գծով | |
| 65 | 10/02/2022 | 78,172 | 177,248 | - | 43,768 | 299,188 |
| 66 | 19/04/2022 | 69,682 | 161,653 | - | 30,748 | 262,083 |
| 67 | 26/05/2022 | 45,046 | 569,125 | - | - | 614,170 |
| 68 | 22/06/2022 | 34,044 | 58,200 | - | - | 92,244 |
| 69B | 27/10/2022 | 60,632 | 752,967 | 25,505 | - | 839,104 |
| 70 | 21/12/2022 | 45,447 | 390,092 | - | - | 435,539 |
| 71 | 30/03/2023 | 89,088 | 1,099,324 | - | - | 1,188,412 |
| 72 | 20/04/2023 | 20,209 | 97,705 | - | - | 117,915 |
| **Total** | | **442,320** | **3,306,314** | **25,505** | **74,516** | **3,848,655** |

4. Նպատակային հաշվի հաշվետվություն

| | |
|---|---|
| Հաշվեհամար | 900000900283 |
| Բանկ | Կենտրոնական գանձապետարան |
| Հասցե | Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Մելիք Ադամյան փ. 1, |
| Արժույթ | ԱՄՆ Դոլար |

| | **ՎԶՄԲ վարկ 8483-AM** |
|---|---|
| **1. Սկզբնական մնացորդն առ 01.01.2022թ.** | 1,400,854 |
| 2. *Ավելացում*. Սկզբնական տարբերություն | - |
| 3. ՀԲ ֆոնդի կանխավճար/համալրում | 2,345,895 |
| 4.*Նվազեցում*. նպատակային հաշվից վերադարձ ՀԲ-ին | - |
| **5. Նպատակային հաշվին համալրված գումարը** | **3,746,749** |
| 6. Նպատակային հաշվի վերջնական մնացորդն առ 30.04.2023թ. | |
| 7. *Ավելացում*. վճարված ընդունելի ծախսերի գումար | 197,285 |
| 8. *Նվազեցում*. Ստացված տոկոսներ (եթե կրեդիտագրվել են նպատակային հաշիվ) | 3,549,464 |
| **9. Ընդամենը հաշվառված համալրում** | - |
| 10. Վերջնական տարբերություն (5)-(9) | **3,746,749** |

### 5. Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը բացահայտում է Ծրագրի ակտիվները, պարտավորությունները և զուտ ակտիվները հաշվետու ամսաթվի դրությամբ: Ներկայացված է հաշվեգրման հիմունքով, համաձայն որի՝ գործարքները ճանաչվում են, երբ տեղի են ունենում (այլ ոչ միայն, երբ դրամական միջոցները ստացվում կամ վճարվում են):

| | Ծնթ. | 30.04.2023<br>ԱՄՆ դոլար | 31.12.2021<br>ԱՄՆ դոլար |
|---|---|---|---|
| **ԱԿՏԻՎՆԵՐ** | | | |
| Դրամական միջոցներ | 6 | 676,328 | 1,941,908 |
| Կանխավճարներ և ստացվելիք գումարներ | 7 | 76,132 | 245,868 |
| **ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ** | | **752,460** | **2,187,776** |
| **ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ** | | | |
| Վճարվելիք գումարներ | 8 | 38,542 | 49,084 |
| **Ընդամենը պարտավորություններ** | | **38,542** | **49,084** |
| **ԶՈՒՏ ԱԿՏԻՎ** | | | |
| **Անճողական եկամուտ** | | | |
| ***Ֆոնդեր*** | 9 | | |
| ՎԶՄԲ 8483-AM | | 30,000,000 | 27,654,104 |
| ՀՀ Կառավարության համաֆինանսավորում | | 11,034,404 | 9,999,197 |
| Համայնքների ներդրումներ | | 2,453,757 | 2,358,651 |
| Հովանավորների ներդրումներ | | 73,284 | 73,284 |
| Փոխանցում ՍՆՏԶ ԼՖ | | (54,947) | - |
| | | **43,506,498** | **40,085,236** |
| **Անճողական ծախսեր** | | | |
| Ծրագրի ծախսեր | | (42,936,910) | (37,960,435) |
| | | **(42,936,910)** | **(37,960,435)** |
| Արտարժույթի տարբերությունից օգուտ/(կորուստ) | | **144,330** | **13,891** |
| **ԸՆԴԱՄԵՆԸ ԶՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐ** | | **713,918** | **2,138,692** |

### 6. Դրամական միջոցներ

| Հաշիվ | Բանկ | Արժույթ | 30.04.2023<br>ԱՄՆ դոլար | 31.12.2021<br>ԱՄՆ դոլար |
|---|---|---|---|---|
| Նպատակային հաշիվ (IBRD) Loan 8483-AM) | Գանձապետարան | ԱՄՆ դոլար | 197,285 | 1,400,854 |
| ՀՀ Կառավարության համաֆինանսավորում | Գանձապետարան | ՀՀ Դրամ | 46,422 | - |
| Համայնքների ներդրումների | Արարատ բանկ | ՀՀ Դրամ | 281,377 | 278,015 |
| Համայնքների ներդրումների | Գանձապետարան | ՀՀ Դրամ | 151,221 | 263,020 |
| Հովանավորների ներդրումներ | Արարատ բանկ | ՀՀ Դրամ | 23 | 19 |
| | | | **676,328** | **1,941,908** |

## 7. Կանխավճարներ և ստացվելիք գումարներ

| | 30.04.2023<br>ԱՄՆ դոլար | 31.12.2021<br>ԱՄՆ դոլար |
|---|---|---|
| Կանխավճարներ աշխատանքների գծով | 76,132 | 245,844 |
| Այլ կանխավճարներ | - | 24 |
| | **76,132** | **245,868** |

## 8. Վճարվելիք գումարներ

| | 30.04.2023<br>ԱՄՆ դոլար | 31.12.2021<br>ԱՄՆ դոլար |
|---|---|---|
| On Works (Retentions)* | 38,542 | 47,390 |
| Other payables | - | 1,694 |
| | **38,542** | **49,084** |

(*) Պահումները կատարվում են շինարարական աշխատանքների գծով ներկայացված հաշիվների 5%-ի չափով՝ որպես կատարված աշխատանքների որակի երաշխիք, որից 2.5%-ը վճարվում է աշխատանքների ավարտական ակտը ստորագրելուց հետո, իսկ մնացած 2.5%-ը պահվում է մինչև մեկ տարի ժամկետով՝ որպես կատարված աշխատանքների որակի երաշխիք կամ վճարվում է մեկ տարի ժամկետ ունեցող բանկային երաշխիքի հիման վրա:

## 9. Ֆոնդեր

### *9.1. ՎԶՄԲ 8483-AM վարկ*

| | 31.12.2021թ. ավարտվող տարի<br>ԱՄՆ դոլար | 01.01.2022թ.-ից 30.04.2023թ.<br>ԱՄՆ դոլար | Կուտակային առ 30.04.2023թ.<br>ԱՄՆ դոլար |
|---|---|---|---|
| Կանխավճար/ (կանխավճարի մարում) | - | (1,502,760) | 197,240 |
| SOE ընթացակարգեր, Առհանումների հաշվետվություններ | 2,248,634 | 3,848,655 | 29,727,760 |
| Նախնական վճար | - | - | 75,000 |
| **Ընդամենը** | **2,248,634** | **2,345,895** | **30,000,000** |

| | |
|---|---|
| Ընդամենը ֆինանսավորման բյուջեի | **30,000,000** |
| Հատկացված ֆինանսավորման տոկոսը | **100%** |

### *9.2. ՀՀ Կառավարության համաֆինանսավորում*

| | 31.12.2021թ. ավարտվող տարի<br>ԱՄՆ դոլար | 01.01.2022թ.-ից 30.04.2023թ.<br>ԱՄՆ դոլար | Կուտակային առ 30.04.2023թ.<br>ԱՄՆ դոլար |
|---|---|---|---|
| Ներդրումներ դրամական միջոցներով | 959,622 | 1,035,207 | 11,034,404 |
| **Ընդամենը** | **959,622** | **1,035,207** | **11,034,404** |

| | |
|---|---|
| Ընդամենը ֆինանսավորման բյուջեի | **11,011,000** |
| Հատկացված ֆինանսավորման տոկոսը | **100%** |

*9.3. Համայնքների ներդրումներ*

| | 31.12.2021թ. ավարտվող տարի ԱՄՆ դոլար | 01.01.2022թ.-ից 30.04.2023թ. ԱՄՆ դոլար | Կուտակային առ 30.04.2023թ. ԱՄՆ դոլար |
|---|---|---|---|
| Ներդրումներ դրամական միջոցներով | 198,964 | 95,106 | 2,453,757 |
| **Ընդամենը** | - | (54,947) | (54,947) |
| | **198,964** | **40,159** | **2,398,810** |
| Ընդամենը ֆինանսավորման բյուջեի | | | |
| Հատկացված ֆինանսավորման տոկոսը | | | **1,915,000** |
| Ներդրումներ դրամական միջոցներով | | | **125%** |

*9.4. Հովանավորների ներդրումներ և այլն*

| | 31.12.2021թ. ավարտվող տարի ԱՄՆ դոլար | 01.01.2022թ.-ից 30.04.2023թ. ԱՄՆ դոլար | Կուտակային առ 30.04.2023թ. ԱՄՆ դոլար |
|---|---|---|---|
| Ներդրումներ դրամական միջոցներով | - | - | 73,284 |
| **Ընդամենը** | **-** | **-** | **73,284** |
| Ընդամենը ֆինանսավորման բյուջեի | | | **74,000** |
| Հատկացված ֆինանսավորման տոկոսը | | | **99%** |

## 10. Ծրագրի կուտակային ծախսեր

### *10.1. Ծրագրի ծախսումները ըստ ֆինանսավորման աղբյուրների*

*ԱՄՆ դոլար*

| Հոդված | 01.01.2022թ.-ից 30.04.2023թ. | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ՎԶՄԲ 8483-AM վարկ | ՀՀ Կառավարություն | Համայնքների ներդրում | Հովանավորներ և այլն | Ընդամենը |
| 1. Աշխատանքներ, ապրանքներ և խորհրդատուների ծառայություններ՝ Ծրագրի Մաս Ա.-ի գծով | 365,190 | 103,295 | 40,105 | - | **508,590** |
| 2. Աշխատանքներ, ապրանքներ և խորհրդատուների ծառայություններ՝ Ծրագրի Մաս Բ.-ի գծով | 3,128,023 | 823,874 | 219,081 | - | **4,170,978** |
| 3. Ապրանքներ, խորհրդատուների ծառայություններ (ներառյալ՝ Ծրագրի աուդիտը) և Դասընթացներ ՝ Ծրագրի Մաս Գ.-ի գծով | 25,505 | 9,699 | - | - | **35,204** |
| 4. Գործառնական ծախսեր՝ Ծրագրի Մաս Գ.-ի գծով | 30,746 | 71,739 | 23 | - | **102,508** |
| 5. Նախնական վճար | - | - | - | - | - |
| **Ընդամենը** | **3,549,464** | **1,008,607** | **259,209** | **-** | **4,817,280** |
| | | | | | |

| Հոդված | Կուտակային առ 30.04.2023թ. | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ՎԶՄԲ 8483-AM վարկ | ՀՀ Կառավարություն | Համայնքների ներդրում | Հովանավորներ և այլն | Ընդամենը |
| 1. Աշխատանքներ, ապրանքներ և խորհրդատուների ծառայություններ՝ Ծրագրի Մաս Ա.-ի գծով | 17,777,667 | 5,452,480 | 1,410,549 | 72,789 | 24,713,485 |
| 2. Աշխատանքներ, ապրանքներ և խորհրդատուների ծառայություններ՝ Ծրագրի Մաս Բ.-ի գծով | 10,077,665 | 2,679,776 | 679,789 | - | 13,437,230 |
| 3. Ապրանքներ, խորհրդատուների ծառայություններ (ներառյալ՝ Ծրագրի աուդիտը) և Դասընթացներ ՝ Ծրագրի Մաս Գ.-ի գծով | 223,068 | 84,826 | - | - | 307,894 |
| 4. Գործառնական ծախսեր՝ Ծրագրի Մաս Գ.-ի գծով | 1,646,365 | 2,793,426 | 1,059 | 41 | 4,440,891 |
| 5. Նախնական վճար | 75,000 | - | - | - | 75,000 |
| **Ընդամենը** | **29,799,765** | **11,010,508** | **2,091,397** | **72,830** | **42,974,500** |

### 10.2. Ծրագրի բյուջեի կատարում

| Հոդված | Կուտակային առ 30.04.2023թ. | Բյուջե | Կատարում |
|---|---|---|---|
| | ԱՄՆ դոլար | ԱՄՆ դոլար | % |
| 1. Աշխատանքներ, ապրանքներ և խորհրդատունե-րի ծառայություններ՝ Ծրագրի Մաս Ա.-ի գծով | 24,713,485 | 24,962,200 | 99% |
| 2. Աշխատանքներ, ապրանքներ և խորհրդատունե-րի ծառայություններ՝ Ծրագրի Մաս Բ.-ի գծով | 13,437,230 | 13,466,000 | 100% |
| 3. Ապրանքներ, խորհրդատուների ծառայություններ (ներառյալ՝ Ծրագրի աուդիտը) և Դասընթացներ ՝ Ծրագրի Մաս Գ.-ի գծով | 307,894 | 296,800 | 104% |
| 4. Գործառնական ծախսեր՝ Ծրագրի Մաս Գ.-ի գծով | 4,440,891 | 4,200,000 | 106% |
| 5. Նախնական վճար | 75,000 | 75,000 | 100% |
| **Ընդամենը** | **42,974,500** | **43,000,000** | **100%** |

### 11. Ծրագրի ավարտ

Ծրագրին ավարտվել է 2022թ.-ի դեկտեմբերի 31-ին (Փակման ամսաթիվ), և ավարտական գործարքները արվել են մինչև 2023թ.-ի ապրիլի 30-ը (Հաշվետու ժամանակաշրջան):
Հաշվետու ժամանակաշրջանի ավարտի դրությամբ՝

1. Փակման ամսաթվից հետո Ծրագրի հետ կապված ծախսեր չեն կատարվել: Արտոնյալ ժամանակահատվածում կատարված վճարումները կապված են եղել մինչև Փակման Ամսաթիվը կատարված ծախսերի հետ,
2. Արտոնյալ ժամանակահատվածից հետո Վարկի հաշվից փոխհատուցված ծախսեր չեն կատարվել,
3. Վարկային ֆոնդերի հետ կապված կապալառուների կողմից չմարված կանխավճարներ կամ վճարվելիք գումարներ չեն եղել,
4. Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված կանխավճարների և դեբիտորական պարտքերի մնացորդները Համայնքի միջոցներից և Կառավարության համաֆինանսավորման միջոցներից ստացված կանխավճարների մնացորդն է ,
5. Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված վճարվելիք գումարների մնացորդը Համայնքի միջոցներից և Կառավարության համաֆինանսավորման միջոցներից ստացված պահումների մնացորդն է,
6. Հաշվետու ժամանակաշրջանի ավարտի ամսաթվի դրությամբ չմարված դրամական մնացորդը բաղկացած է՝
   - Կառավարության համաֆինանսավորման հաշիվ 46,422 ԱՄՆ դոլար մնացորդով
   - Համայնքի ներդրումների հաշիվներ՝ 432,598 ԱՄՆ դոլար մնացորդով
   - Նպատակային հաշվի մնացորդը՝ 197,285 ԱՄՆ դոլար
7. 197,240 ԱՄՆ դոլարի վերադարձի գումարը փոխանցվել է ՀԲ 2023թ. մայիսի 5-ին: Մնացած 45 ԱՄՆ դոլարի մնացորդը պայմանավորված է Ծրագրի իրականացման ընթացքում փոխարժեքի տատանումներով:
8. Մենք տեղյակ չենք Ծրագրի դեմ առկա դատավարությունների մասին:

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ԾՐԱԳՐԻ ԿՈՂՄԻՑ ՎՃԱՐՎԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԵՎ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԴՐՈՒՄ

*Սոցիալական Ներդրումների և Տեղական Զարգացման ծրագիր*
*ՎԶՄԲ վարկ 8483-AM*
*2022թ. հունվարի 1-ից մինչև 2023թ. ապրիլի 30-ը ընկած ժամանակահատվածի վերաբերյալ*
*ԱՄՆ դոլար*

| Ծախսային հոդված | Դիմում | ՀՏԶՀ | ՀԲ | Տարբերություն |
|---|---|---|---|---|
| Կանխավճարի մարում | 70 | (196,433) | (196,433) | - |
| | 71 | (1,188,412) | (1,188,412) | - |
| | 72 | (117,915) | (117,915) | - |
| | | (1,502,760) | (1,502,760) | - |
| 1. Աշխատանքներ, ապրանքներ և խորհրդատուների ծառայություններ՝ Ծրագրի Մաս Ա.-ի գծով | 65 | 78,172 | 78,172 | - |
| | 66 | 69,682 | 69,682 | - |
| | 67 | 45,046 | 45,046 | - |
| | 68 | 34,044 | 34,044 | - |
| | 69B | 60,632 | 60,632 | - |
| | 70 | 45,447 | 45,447 | - |
| | 71 | 89,088 | 89,088 | - |
| | 72 | 20,209 | 20,209 | - |
| | | **442,320** | **442,320** | |
| 2. Աշխատանքներ, ապրանքներ և խորհրդատուների ծառայություններ՝ Ծրագրի Մաս Բ.-ի գծով | 65 | 177,248 | 177,248 | - |
| | 66 | 161,653 | 161,653 | - |
| | 67 | 569,125 | 569,125 | - |
| | 68 | 58,200 | 58,200 | - |
| | 69B | 752,967 | 752,967 | - |
| | 70 | 390,092 | 390,092 | - |
| | 71 | 1,099,324 | 1,099,324 | - |
| | 72 | 97,705 | 97,705 | - |
| | | **3,306,314** | **3,306,314** | |
| 3. Ապրանքներ, խորհրդատուների ծառայություններ (ներառյալ՝ Ծրագրի աուդիտը) և Դասընթացներ ՝ Ծրագրի Մաս Գ.-ի գծով | 69 | 25,505 | 25,505 | - |
| | | **25,505** | **25,505** | |
| 4. Գործառնական ծախսեր՝ Ծրագրի Մաս Գ.-ի գծով | 65 | 43,768 | 43,768 | - |
| | 66 | 30,748 | 30,748 | - |
| | | **74,516** | **74,516** | |
| **Ընդամենը ծախսեր** | | **3,848,655** | **3,848,655** | |
| **Ընդամենը** | | **2,345,895** | **2,345,895** | |